# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝** ԳԲՔԱ-ԼՕ-2020/105, 23.09.2020թ.

**Բողոք բերող անձ՝** «Աբամա Թրեյդ» ՍՊԸ

**Պատվիրատու՝** «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ

**Գնման ընթացակարգի ծածկագիրը՝** «ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/84» բաց մրցույթ

**Գնման առարկան՝** Դեղորայքի ձեռքբերում:

**Բողոքի պահանջը**՝ Պարտավորեցնել «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ին իր կողմից 08.09.2020թ.-ին հայտարարված թիվ «ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/84» ծածկագրով դեղորայքի մատակարարման բաց մրցույթում կատարել փոփոխություն և ցանկից հեռացնել վերոնշյալ 2 չափաբաժինները:

**ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ**
**ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ**

**Նիստերին կարելի է առցանց հետևել** https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում,

իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոք քննող անձին
Հասցե՝ ք. Երևան, Երևան, Մելիք-Ադամյան 1

Բողոք ներկայացնող անձի անվանումը՝ «Աբամա Թրեյդ» ՍՊԸ
տնօրեն՝ Էդուարդ Փոթոյան
անձնագիր AN0206175, տրված 028-ի կողմից 25.07.2012թ-ին
հասցե՝ ք. Երևան, Աբովյան փ. 23շ

Պատվիրատուի անվանումը և հասցեն՝ «Վ. Ա. Ֆանարջյանի Անվան
ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ
ք. Երևան, Ֆանարջյան 76շ.

Բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը և
առարկան՝ «ՈՒԱԿ - ԲՄԱՊՁԲ 20 /84»
դեղորայքի

# ԲՈՂՈՔ

1. Վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը

«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն հայտարարել է «ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/84» ծածկագրով դեղորայքի մատակարարման բաց մրցույթ, որի մեջ ներառել է հստակ այն չափաբաժիններն ու հստակ այն քանակները, որով «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն պարտավոր է կնքել պայմանագիր «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ի հետ և պատվիրել այդ նույն ապրանքները նույն քանակներով «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ին:

Մասնավորապես՝

Չափաբաժին 1 - կարբոպլատին, լուծույթ ն/ե ներարկման 10մգ/մլ 45 մլ ապակե սրվակ
Քանակը՝ 200 հատ

Չափաբաժին 3 - Դոքսոռուբիցին, Խտանյութ կաթիլաներարկման լուծույթի 2մգ/մլ ապակե սրվակ 25մլ
Քանակը՝ 500 հատ

2. Բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները.

Վերոնշյալ երկու չափաբաժինները ադեն իսկ ներառված էին «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ- կողմից հայտարարված թիվ ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/65 ծածկագրով գնման մրցույթում, որոնց համար պատվիրատուն պարտավոր է պայմանագիր կնքել մեր կազմակերպության հետ՝ որպես ընտրված մասնակից:

Կից ներկայացնում ենք պատվիրատուի արձանագրությունը, որով պատվիրատուն <<Աբամա Թրեյդ>> ՍՊԸ-ին ընտրված մասնակից է ճանաչել և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացրել:
Սույն արձանագրությունով նաև սահմանվել է 10 օրացուցային օր անգործության ժամկետ:

2020թ-ի սեպտեմբերի 9-ին էլեկտրոնային ծանուցմամբ պատվիրատուն ուղարկել է պայմանագրի նախագիծը և պայմանագիր կնքելու առաջարկը:
Կից ներկայացնում ենք:

Նաև Ձեզ ենք ներկայացնում թիվ ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/65 ծածկագրով գնման հրավերի տեքստը:

Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետի

2. Գնման առարկայի բնութագրերը՝
3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

Համաձայն ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման

58. Եթե գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր չի կնքվում, ապա այդ ընթացակարգը չկայացած է հայտարարվում, և օրենքով սահմանված կարգով կազմակերպվում է գնման նոր ընթացակարգ:

Սակայն մրցույթը հայտարարվել է սույն թվականի սեպտեմբերի 9-ին, երբ դեռ նախորդ ընթացակարգը չկայացաց չի հայտարարվել:

Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի, յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

3. Բողոք ներկայացրած անձի պահանջ

Խնդրում ենք պարտավորեցնել «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ին իր կողմից 08/09/2020թ-ին հայտարարված թիվ «ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/84» ծածկագրով դեղորայքի մատակարարման բաց մրցույթում կատարել փոփոխություն և ցանկից հեռացնել վերոնշյալ երկու չափաբաժինները:

4. Կից ներկայացնում ենք բողոքարկման վճարը կատարած լինելը հիմնավորող փաստաթղթի պատճենը:

5. Այն բանկի անվանումը և հաշվեհամարը, որին բողոքը բավարարվելու դեպքում պետք է հետ փոխանցվի վճարը.

«Աբամա Թրեյդ » ՍՊԸ
ՀՎՀՀ՝02825811
abama.trade@mail.ru
բանկ՝ Կոնվերս Բանկ ՓԲԸ
Հ/Հ 19300878502700

Առդիր՝ 5 ֆայլ:

<<ԱԲԱՄԱ ԹՐԵՅԴ>> ՍՊԸ
տնօրեն՝ էդուարդ Փոթոյան

(ստորագրություն)

22.09.2020թ.